Գործ թիվ ԵԴ/9531/02/23

ՎՃԻՌ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

25 ապրիլի 2023թ. **ք. Երևան**

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան)

նախագահությամբ դատավոր՝ **Տ. Գրիգորյանի**

քարտուղարությամբ՝ Ա.Մարաբյանի

մասնակցությամբ ՀՀ քաղաքաշինության
կոմիտեի ներկայացուցիչ՝ Մ.Սերոբյանի

Քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի <<ԴՎԱ>> ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) (գրանցման համար 26.110.1088102, ՀՎՀՀ 06957531, հասցե՝ ՀՀ, ք Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տ. Մեծի պ. 16 շ., բն. 23) ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատասխանող) (հասցե՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 10.11.2022թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ներկայացված միջնորդությունը՝ հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցվոր <<ԴՎԱ>> ՍՊԸ ներկայացուցիչ Դ. Մարգարյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 10.11.2022թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի՝ 21.03.2023թ. որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցադիմումը ներկայացվել է կրկին:

Դատարանը 28.03.2023թ. որոշում է կայացրել կրկին ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու, ապացույց պահանջելու և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման, իսկ հայցադիմումին կից ներկայացվել է պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը, Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198 հոդվածով, Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

<<ԴՎՍ>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 10.11.2022թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**